

Հայտարարություն

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

1. Հանձնաժողովի ֆինանսական վերլուծության վարչության առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 89-3.2-34)

Մասնակցում է սակագների սահմանման (վերանայման) հայտերի ֆինանսատնտեսական փորձաքննության աշխատանքներին, լիցենզավորման, թույլտվությունների ստացման հայտերի ֆինանսատնտեսական փորձաքննության աշխատանքներին, մասնակցում է կարգավորվող անձանց կողմից ներկայացվող ֆինանսատնտեսական տեղեկատվությունների վերլուծության աշխատանքներին, Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է Հանձնաժողովի ներքին կանոնակարգային փաստաթղթերի մշակմանը.

2. Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

Տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենթ) մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական, կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, ՀՀ Մահմանադրության, ՀՀ ջրային օրենսգրքի, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

3. Թափուր պաշտոնի հիմքի վերացման ժամկետը՝

Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձի կողմից նշանակում կատարվելը.

4. Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է՝

« 11 » « հոկտեմբերի » 2018թ

5. Աշխատավարձի չափը՝

Մեկ հարյուր հիսուն հազար յոթ հարյուր իննսունինը (150 799) դրամի չափով.

6. Աշխատանքի վայրը, հեռախոսահամարները՝

ք.Երևան, Սարյան 22, հեռ. 52-53-40-108,118

7. Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն դիմում, տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր և գորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ իսկականի հետ միասին,

մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,

անձնագրի, հանրային ծառայության համարանիշի (սոցիալական քարտի) պատճենները:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 10⁰⁰-ից մինչև 12³⁰-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերը ներկայացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝

(Երևան, Սարյան 22, հեռ. 52-53-40-108,118):

